Հաշվետվություն

1. *Անունը, ազգանունը*

   Վահրամ Մկրտչյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*

   ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

   Ստրասբուրգ, Ֆրանսիա,2018թ. մարտի 21-23-ը

4. *Հրավիրող կողմը*

Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտե

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը*)

Եվրոպայի խորհրդի կենտրոնակայան Ստրասբուրգում տարեկան երկու անգամ տեղի են ունենում Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի (CDPPE) նիստեր: Նշված կոմիտեում հանդիսանում եմ Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչը: Նիստերի ընթացքում քննարկվում են եվրոպական կրթական տարածքին վերաբերող բազմաթիվ հարցեր, ինչպես նաև CDPPE-ի քարտուղարության կողմից ներկայացվում է նախորդ կատարողականի հաշվետվությունը:

6. *Քննարկված թեմաները*

Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի մարտի 21-23 տեղի ունեցած նիստերի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- Նիստերից մեկում ելույթի խոսքով հանդես եկավ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թյորբորն Յագլանդը: Իմ կողմից կոչ արվեց գլխավոր քարտուղար Յագլանդին առավելագույնս կենտրոնացնել Եվրոպայի խորհրդի

ջանքերը Արևելյան գործընկերության անդամ երկրներում՝ կրթության ոլորտում նոր ծրագրեր իրականացնելու համար:

- 2017թ. նոյեմբերին Գոտենբորգում տեղի ունեցած ԵՄ-ի սոցիալական գագաթնաժողովին ԵՄ հանձնաժողովի կողմից առաջարկվել էր մինչև 2025թ. ստեղծել «Եվրոպական կրթական տարածք», որը ներառելու է կրթական բոլոր աստիճանները: Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեն անդրադարձավ «Եվրոպական կրթական տարածք» ստեղծելու առաջարկի իրականացման հարցում Եվրոպայի խորհրդի դերին և հիմնական անելիքներին: Մասնավորապես մատնանշվեց այն գործիքակազմը, որի կիրառմամբ կձևավորվի եվրոպական կրթական տարածքը: Գործիքակազմը ներառում է Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացվող կրթական ծրագրերի շարունակականությունը պահպանելու անհրաժեշտությունը, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունությանը և փոխանակման ծրագրերին նպաստելու կարևորությունը, օտար լեզուների դասավանդման խթանման և ավարտական փաստաթղթերի փոխճանաչման անհրաժեշտությունը և այլն: Որպես գլխավոր նպատակ առանձնացվեց Եվրոպայում միասնական կրթական տարածքի ստեղծումը, որտեղ ուսումնառողները և դասավանդողները կունենան բացարձակ շարժունություն:

- Ներկայացվեցին «Ժողովրդավարական մշակույթի իրավասությունները» ծրագրի շրջանակներում իրականացված գործունեության արդյունքները: Մասնավորապես հաստատվեց նորաստեղծ Կրթության քաղաքականության խորհրդատուների ցանցի կազմը (Education Policy Advisers Network), որի մեջ մտնում են կոմիտեի անդամ երկրներից 2-3-ական ներկայացուցիչ: Տեղեկացվեց նաև, որ ս.թ. ապրիլի 23-24-ը Կոպենհագենում «Կրթության միջոցով ժողովրդավարության ամրապնդում» խորագրով տեղի կունենա վերոնշյալ ցանցի անդրանիկ հանդիպումը, որին կմասնակցեն Կրթության քաղաքականության խորհրդատվական ցանցի բոլոր անդամները, այդ թվում նաև Հայաստանի ներկայացուցիչը: Կրթության քաղաքականության

խորհրդատվական ցանցը ստեղծվել է Եվրոպական մշակութային կոնվենցիայի (1954թ.) կողմ պետություններում կրթության բնագավառում արդյունավետ բարեփոխումներին նպաստելու և ժողովրդավար մշակույթի տարածման սկզբունքների մշակման համար:

- Քննարկվեցին նաև լեզուների համաեվրոպական շրջանակներին /CEFR/ համապատասխան օտար լեզուների դասավանդման և ուսումնառության նոր մոտեցումները և չափորոշիչները: Այս համատեքստում ԵԽ-ի անդամ երկրներին ս.թ. մայիսին կներկայացվի լեզուների համաեվրոպական շրջանակների (CEFR) վերաբերյալ ուղեցույցը՝ ազգային մակարդակում լեզվական կրթության ոլորտում ազգային ուսումնական պլանները բարելավելու և դասավանդման/ուսումնառության մեթոդները կատարելագործելու համար:

- Ներառական կրթության ապահովման մոտեցումների մշակման տեսանկյունից անդրադարձ կատարվեց որակյալ պատմության դասավանդմանը, փախստականներին, միգրանտներին ու խոցելի խմբերին կրթության տրամադրման կարևորությանը: Այս առումով ամփոփվեցին «Կրթություն հանուն բազմազանության և ժողովրդավարության. դասավանդելով պատմություն ժամանակակից Եվրոպայում» միջկառավարական ծրագրի առաջին փուլի շրջանակներում տեղի ունեցած 4 տարածաշրջանային սեմինարների արդյունքները:

- Ներկայացվեցին նաև Եվրոպայի խորհրդի կրթության ոլորտում էթիկայի, թափանցիկության և բարեվարքության համաեվրոպական հարթակի (ETINED) գործունեության արդյունքները և նոր զարգացումները: Եվրոպայի խորհրդի մեր գործընկերների կողմից տեղեկացվեց, որ ԵԽ-ի աջակցությամբ ս.թ. փետրվարի 15-16 տեղի ունեցած աշխատաժողովին ամփոփվել են նաև ՀՀ-ում 2015-2017թթ. իրականացված «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի արդյունքները: Նշվեց, որ շատ են կարևորվում ծրագրի

ձեռքբերումները, և ջանքեր չեն խնայվելու հայկական փորձը այլ երկրներում ներդնելու համար:

- Կրկին շեշտվեց կրթական գործընթացի թվայնացման կարևորությունը, բարձրագույն կրթության ժողովրդավար առաքելությունը և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից 4-րդ նպատակին՝ որակյալ կրթությանը հասնելու պատրաստակամությունը:
- Որպես ակնկալվող արդյունք առանձնացվեց նաև անդամ պետությունների կողմից կրթության բնագավառում ներառական մոտեցումների մշակումը:

7. *Հանդիպումները, բարձրացված կամ քննարկված հարցերը, ելույթներ:*

Ելույթ եմ ունեցել «Ժողովրդավարական մշակույթի իրավասությունները» և «Կրթություն հանուն բազմազանության և ժողովրդավարության. դասավանդելով պատմություն ժամանակակից Եվրոպայում» թեմաների վերաբերյալ:

Հանդիպել եմ Եվրոպայի խորհրդի կրթության բաժնի պետ Սյուր Բերգանի հետ և վերջինիս հետ քննարկել Եվրոպայի խորհրդի աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կրթական ծրագրերը և դրանց հեռանկարները:

8. *Գործուղվողը*

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Վահրամ Մկրտչյան

9. *Ստորագրությունը, ամսաթիվը*

28.03.2018